

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄՆԵՐ Հայ գրքի նոր անունների ներկայացում

ՀՏԴ: 01:002

DOI: 10.54503/2953-8092.2025.1(5)-110

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Տեխնիկական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0002-2644-2507](https://orcid.org/0000-0002-2644-2507)

ՄԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան

ORCID: [0009-0005-3657-0704](https://orcid.org/0009-0005-3657-0704)

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Բանասիրական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0002-7989-0514](https://orcid.org/0000-0002-7989-0514)

Հայր Գարեգին վրդ. Ջարրհանալեանից սկսած՝ մատենագետների տարրեր խմբեր և անհատ մասնագետներ հետևողականորեն զբաղվել են հայ գրքի մատենագիտական ցանկերի կազմման և լրամշակման աշխատանքներով: Նման ցանկերը, սակայն, երբեք չի կարելի համարել ամբողջական, քանի որ աշխարհի տարրեր գրադարաններում, հաստատությունների արխիվներում ու անհատական հավաքածուներում ի հայտ են գալիս նոր գրքեր,

* Հոդվածը ներկայացվել է 04.05.2025, գրախոսվել է 14.06.2025, ընդունվել է տպագրության 23.06.2025:

The article was submitted on 04.05.2025, reviewed on 14.06.2025, and accepted for publication on 23.06.2025.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

որոնք փարբեր պատճառներով սպրդել են հեփազոփող-մատենագետների ուշադրությունից:

Հողվածը ներկայացնում է նորահայտ հայերեն և հայատառ-թուրքերեն փայագրություններ, որոնք ի հայտ են եկել ԱՄՆ Արփասահմանյան Առաքելությունների հանձնակատարների խորհրդի (ԱԱՀԱԽ) գործունեության շրջանակում: Խորհուրդը գործել է 19-20-րդ դարերում և նպաստել փարբեր լեզուներով, այդ թվում՝ հայերեն, հայատառ թուրքերեն, հունարեն գրականության հրատարակմանը: «Վրանգված արխիվներ» ծրագրի շրջանակում թվայնացվել է իրենց հավաքածուներում պահվող փայագիր ժառանգությունը, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել հայտնաբերել նոր գրքեր ու պարբերականներ, որոնք նախկինում չէին ընդգրկվել մատենագիտական ցանկերում: Հողվածում ներկայացված է թվով 62 նորահայտ գրքի մատենագիտական նկարագրություն:

Since Father Garegin Vardapet Zarbhanalean, various groups of bibliographers and individual specialists have consistently worked on compiling and refining bibliographic catalogs of Armenian books. However, such catalogs can never be considered complete, as new books continue to emerge in different libraries, institutional archives, and private collections worldwide - books that, for various reasons, have previously escaped the attention of bibliographic researchers.

The article presents newly discovered Armenian and Armenogram Turkish prints that have come to light within the framework of the American Board of Commissioners for Foreign Missions (ABCFM) activities. Active during the 19th and 20th centuries, the Board supported the publication of literature in various languages, including Armenian, Armenogram Turkish, and Greek. As part of the "Endangered Archives" program, this printed heritage has been digitized, enabling the discovery of previously unrecorded books and periodicals not included in earlier bibliographic catalogs. The article provides bibliographic descriptions of 71 newly identified books.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Քանալի բառեր¹ ԱՄՆ Արտասահմանյան Առաքելությունների հանձնակատարների խորհուրդ, տպագիր ժառանգություն, միսիոներական գրականություն, թվայնացում, մատենագիտություն, նորահայտ տպագիր անուններ:

Ինչպես հղել¹ Ջարգարյան, Տ, Մանուկյան, Մ., Գրիգորյան Մ. (2025). Մատենագիտական հետախուզումներ. հայ գրքի նոր անունների ներկայացում, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(5), 110-140.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-110](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-110)

How to cite (APA style): Zargaryan, T., Manukyan, M., Grigoryan, M. (2025), Bibliographical Searches: Introducing Newly Discovered Names of Armenian Books, *Herald of the Armenian Library Association*, 1(5), 110-140.

[https://doi.org/10.54503/2953-8092.2025.1\(5\)-110](https://doi.org/10.54503/2953-8092.2025.1(5)-110)

Ներածություն

Արտասահմանյան առաքելությունների հանձնակատարների ամերիկյան խորհուրդը¹ (ԱԱՀԱԽ), հիմնադրված 1810 թվականին, Միացյալ Նահանգների առաջին կազմակերպված միսիոներական ընկերությունն էր: Դրա հիմնական նպատակն էր արևմտյան բողոքական քրիստոնեության տարածումը ոչ միայն Հարավային ու Արևելյան Ասիայում, այլև Մերձավոր Արևելքում և Աֆրիկայում:

1910 թ. իր 100-ամյակի շեմին խորհուրդը պատասխանատու էր 102 միսիոներական կայանների և 600 միսիոներների համար, որոնք տեղակայված էին տարբեր մայրցամաքներում՝ աշխարհի տարբեր երկրներում՝ Չինաստան, Ճապոնիա, Միկրոնեզիա և Ֆիլիպիններ, Հնդկաստան, Աֆրիկա մայրցամաք, Մեքսիկա, Մերձավոր Արևելքի երկրներ և Թուրքիա: Տվյալ տարածաշրջանի ժողովուրդների շրջանում բողոքականության տարածման նպատակով ԱԱՀԱԽ-ը ֆինանսական աջակցություն էր ցուցաբերում տարբեր լեզուներով գրքե-

¹ American Board of Commissioners for Foreign Missions (ABCFM)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ


րի և պարբերականների հրատարակության համար: Տպագրվում էին ինչպես թարգմանված աստվածաբանական գրականություն, այնպես էլ կրթական նյութեր՝ լեզվաբանական և կրոնական բովանդակությամբ:

Հայ բնակչության դեպքում ուշադրության են արժանի հայերեն և հայատառ թուրքերեն տպագիր գրքերն ու պարբերականները, որոնք մեծ պահանջարկ էին վայելում հանրության տարբեր խավերի մոտ: Նույն երևույթը նկատելի էր նաև հույն բնակչության պարագայում. տպագրվում էին ոչ միայն հունարեն, այլև հունատառ թուրքերեն գրքեր²: Տպագրվել են նաև հայատառ հունարեն գրքեր, սակայն դրանց թիվը համեմատաբար փոքր է: Որպես նմուշ, բերենք հետևյալը³. «Յունարէն քերական: Կէս ժամու մէջ ուսանելի /Յօրինեաց Տիմիթրիօս Ի. Խ. Չօլագիտիս (Չօլագեան); Հրատարակութիւն Պ. Պալենց գրատան.- Կ. Պոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1895.- 31 երկայուն, 1 չի. էջ, շարվ.՝ 14x9 սմ»: Այն նախատեսված է եղել հունարեն սովորողների համար (տե՛ս նկ. 1).

² Հունատառ-թուրքերեն հրատարակություններն ունեն իրենց մասնագիտական տերմինը՝ կարամանլիդիկա (Karamanlidika): Առկա են նաև եբրայերեն տառերով թուրքերեն հրատարակություններ, արաբատառ իսպաներեն հրատարակություններ և այլն:

³ Գիրքն առցանց հասանելի է HathiTrust նախագծի կայքից՝ <https://babel.hathitrust.org/cgi/pt?id=mdp.39015041465462&seq=17> (18.06.2025)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ





նկ. 1 Հայատառ-հունարեն տպագրության օրինակ

Հարկ է նշել, որ եղել են նաև հայատառ-ռուսերեն գրքեր: Հայատառ-ռուսերեն տպագրությունների թիվը շատ սահմանափակ է, բայց կարևորելով այդ փաստը՝ ներկայացնում ենք նման մեկ օրինակ: Խոսքը Վասակ Մադաթեանի «Կըռթ-կըռթ: Վօղէվիլ մէկ արարուածով» գրքի մասին է, որի առաջին տպագրության մասին մատենագիտական տվյալներ սույն հոդվածի հեղինակները դեռ չունեն: Այդ տվյալները բացակայում են նաև «Հայ գիրքը 1851-1900 թթ.» մատենագիտության մեջ: Թերզիբաշյանը այս հրատարակության համար գրել է. «Կըռթ-կըռթ»-ն առաջին անգամ խաղացվել է Երևանում 1876 թ.: Թիֆլիսում առաջին անգամ բեմադրվել է 1879 թ.: Տպագրվել է առաջին անգամ Երևանում 1880 թ.: Հեղինակի կենդանության օրոք «Կըռթ-կըռթ»-ը ունեցել է չորս հրատարակություն, վերջինը՝ 1908 թ.,

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

հեղինակի նկարով» (ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆ 1964, 410, 495, 504): Ա. Ղազիկյանը հավելել է նաև տպարանը՝ Պսակ (ՂԱԶԻԿԵԱՆ 1909, 1718): Հիմք ընդունելով այս նշումը՝ կարելի է մոտավոր կազմել սույն տպագրության մատենագիտական նկարագրությունը՝ «Մադաթեան, Վ., Կըռթ-կըռթ: Վողէվիլ մէկ արարուածով, Երեւան, Պսակ, 1880»: Գիրքն ունեցել է ևս 3 հրատարակություն, հետևյալ հաջորդականությամբ՝ 1884, 1891, 1908 թվականներին: Երկրորդ, երրորդ և չորրորդ տպագրություններն եղել են Թիֆլիսում: Գրքի 1884 թ. հրատարակությունից մեկ հատված ներկայացված է նկար 2-ում:



Նկ. 2 Հայադառ-ռուներն Կրթարարության օրինակ

«Վտանգված արխիվներ» նախագծի շրջանակում, որը ֆինանսավորվում է Բրիտանական գրադարանի կողմից⁴, «Salt Re-

⁴ Բրիտանական գրադարանի կողմից ֆինանսավորվող «Վտանգված արխիվներ» նախագծի շրջանակում ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

search» կառույցը և Թուրքիայում Ամերիկյան հետազոտական ինստիտուտը⁵ համատեղ իրականացրել են 1857-1933 թթ. միջակայքում ԱԱՀԱԽ-ի ջանքերով տպագրված հայերեն, հայատառ-թուրքերեն, օսմաներեն, հունարեն և կարամանլիդիկայով տպագրված պարբերականների, գրքերի, գրքույկների, թռուցիկների թվայնացումը: Այդ նյութերը հասանելի են կառույցի կայքէջից՝ հետևյալ հղման ներքո՝ <https://archives.saltresearch.org/handle/123456789/224889>

Հայերեն հրատարկությունների պարագայում ունենք հետևյալ պատկերը.

Հասանելի են՝

✓ «Աւետաբեր» թերթի 1859-1914 թթ. իրենց մոտ առկա համարները:

✓ «Աւետաբեր» թերթի հայատառ-թուրքերեն տարբերակի 1859-1910 թթ. իրենց մոտ առկա համարները:

✓ «Հայ պատանի» ամսագրի 1920-1922 թթ. իրենց մոտ առկա համարները⁶:

✓ 41 անուն հայատառ թուրքերեն գրքեր (1849-1927 թթ. տպագրություններ), որոնցից 18-ը նորահայտ գրքեր են:

✓ 144 անուն հայերեն գրքեր (1869-1934 թթ. տպագրություններ), որոնցից 44 -ը նորահայտ գրքեր են:

2008 թ. և Հայաստանի ազգային գրադարանում 2013 թ. իրականացվել են թվայնացման հետևյալ նախագծերը՝

[Preservation through digitisation of the endangered Armenian rare books and making them accessible on the Web \(phase 1\) \(EAP180\)](#) և [Digital preservation and cataloguing of early printed Armenian maps, periodicals, and newspapers, and making them accessible online \(EAP613\)](#)

⁵ American Research Institute in Turkey

⁶ Ամսագրի ոչ բոլոր համարներն են առկա Հայաստանի ազգային գրադարանում կամ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում: ԱԱՀԱԽ հավաքածուն ավելի ամբողջական է:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1-ում ներկայացված են 62 նորահայտ գրքերի մատենագիտական նկարագրություններն՝ իրենց տիտղոսաթերթերով:

Օգրագործված գրականության ցանկ (References)

ԹԵՐԻԶԻԲԱՇՅԱՆ 1964 – Թերզիբաշյան, Վ. (1959), *Հայ դրամատուրգիայի պատմություն: Գիրք 2*, Երևան, Հայպետհրատ, 566 [Terzibashyan, V. (1959), *Hay dramaturgiayi patmutyun: Girk 2*, Yerevan, Haypethrat, 566];

ՂԱԶԻԿԵԱՆ 1909 – Ղազիկեան, Ա. (կազմ.) (1909), *Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան, հտ. Ա*, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, 2080 [Ghazikyan, A. (comp.) (1909), *Haykakan Nor Matenagitutyun ev Hanragitaran, vol. 1*, Venice, Surb Ghazar, 2080];

BIBLIOGRAPHICAL SEARCHES

Introducing Newly Discovered Names of Armenian Books

TIGRAN ZARGARYAN

***Fundamental Scientific Library of NAS RA
Ph. D. (Technical Sciences)***

MERY MANUKYAN

Fundamental Scientific Library of NAS RA

MAYA GRIGORYAN

***Fundamental Scientific Library of NAS RA
Ph. D. in Phylology***

Keywords: American Board of Commissioners for Foreign Missions (ABCFM), Printed Heritage, Missionary Literature, Digitization, Bibliography, Newly Discovered Prints.

The American Board of Commissioners for Foreign Mission's activities, particularly in publishing and missionary education, had a significant cultural and linguistic impact on diverse communities across the Ottoman Empire. The Board's financial and logistical support facilitated the publication of a wide array of mate-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ


rials in various languages and scripts - including Armenian, Armenogram Turkish, Greek, Greek in Turkish script - tailored to the linguistic realities of local populations.

Among these, the Armenogram Turkish and Armenian-language materials produced for Armenian communities are essential. They serve as tools of religious instruction and as rich documentary evidence of linguistic hybridity and cultural interaction in the late 19th and early 20th centuries. Recent digitization efforts under the "Endangered Archives" project, funded by the British Library and implemented in collaboration with SALT Research and the American Research Institute in Turkey, have made a significant portion of this legacy accessible to researchers worldwide. The digital collection includes rare newspapers (e.g., *Avedaper* and its Armenogram Turkish version), the journal *Hay Patani*, and an extensive list of Armenian and Armenogram Turkish books. Notably, the database includes 62 previously unknown titles - 18 in Armenogram Turkish and 44 in Armenian - identified and cataloged during the project.

The availability of these materials not only enriches our understanding of American missionary strategies and their cultural ramifications but also contributes valuable resources for the study of multilingual print culture, minority education, and the preservation of endangered textual heritage. This collection represents an important step toward reconstructing the transnational history of missionary print networks and the intellectual life of non-Muslim communities within the late Ottoman Empire.

Հավելված 1

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Հայ գրքի նոր անունների
1886



ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ եւ հրաշք զարդիս /Թարգմանեաց յանգլիականէ Յ. Հ. ՃԷՃԻԳԵԱՆ.- Կ. Պոլիս: Տպագրութիւն Գ. Պաղտատլեան (Արամեան), 1886.- 75 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ / ԵՒ / ՀՐԱՇԲ
ԶԱՐԳԻՍ / ԹԱՐԳՄԱՆԵԱՅ ՅԱՆԳԼԻԱԿԱՆԷ / Յ. Հ.
ՃԷՃԻԳԵԱՆ / Կ. ՊՈԼԻՍ / ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ.
ՊԱՂՏԱՏԼԵԱՆ / (Արամեան) / 1886 /


Ութածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագիրը՝ հոծ երկաթագիր: Մեկ վերջագարդ, տողատակի ծանոթագրություններ: Շապիկը՝ զարդափակ, վրան՝ զարդանախշ և օսմաներեն գրություն: Տիտղոսաթերթին՝ զարդանախշեր:

Ծանոթ.՝ Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229334>

1887

ՄԻՆԱՍԵԱՆ ՄԻՆԱՍ Գ. (ԳԷՈՐԳԵԱՆ)



Կրթութիւն ճայնական երաժշտութեան ըստ երոպական դրութեան ի պէտս վարժարանաց եւ ամեն կարգի անձանց /Աշխատասիրեաց Մինաս Գ. Մինասեան (Գէորգեան).- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յովսեփայ Գավաթեան, 1877.- 92 էջ, նոտա:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


ԿՐԹՈՒԹԻՒՆ / ՁԱՅՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ / ԸՍՏ / ԵՒՐՈՊԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ / Ի ՊԷՏՍ / ՎԱՐժԱՐԱՆԱՅ ԵՒ ԱՄԵՆ ԿԱՐԳԻ ԱՆՁԱՆՅ / ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ / ՄԻՆԱՍ Գ. ՄԻՆԱՍԵԱՆ / (ԳԷՈՐԳԵԱՆ) / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱԹԵԱՆ / 1887 /

Երկձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մանր զարդանախշեր, բաժանարարներ, տողատակի ծանոթագրություններ: Շապիկը՝ զարդափակ, վրան՝ զարդանախշ, օսմաներեն գրություն, նաև՝ դաշնամուրի պատկեր (նկարիչ՝ J. Manour), վերջերեսին՝ գրքի արժեքը և զարդապատկեր: Տիտղոսաթերթին՝ զարդանախշեր:

Ծանոթ.՝ Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել «Հայ գիրքը 1850-1900 թթ.» մատենագիտության մեջ: Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան հայ կեանքի» (Վենետիկ, 1909) գրքում տպագրության թվականը նշվել է 1880՝ հարցականով:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229354>

1889



ԵՐՐՈՐԴ ընթերցարան մանկանց դպրոցաց եւ ընտանեաց համար.- Կոստանդնուպոլիս: Ի տպարանի Ա. Յակոբ Պոյաճեան, 1889.- 234, 3 չի. էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԵՐՐՈՐԴ / ԸՆԹԵՐՅԱՐԱՆ / ՄԱՆԿԱՆՑ / ԴՊՐՈՑԱՑ ԵՒ ԸՆՏԱՆԵԱՑ ՀԱՄԱՐ / ... / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ / ՖԻՆՃԱՆՃԸԸԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ ՆՈՒՄԷՐՕ 25 / 1889 /

Ութածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոժ երկաթագիր: Բուն շարադրանքում՝ մանր զարդանախշեր: Տիտղոսաթերթին՝ զարդանախշ և օսմաներեն գրություն:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակն ունի կոշի, զարդափակ կազմ, վրան՝ վերնագրի հակիրճ տարբերակը. «Երրորդ ընթերցարան»: Մատենագետներին հայտնի է նաև 1887 թ. տպագրությունը, որտեղ նույնությամբ պահպանված են էջակալությունը և շարադրանքը: Երկու գրքերի մատենագիտական նկարագրությունները չեն արտացոլվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229323>

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ


1891

ԱՂՕԹՔ ընտանեկան եւ առանձնական.- Կոստանդնուպոլիս: Ի տպարանի Ա. Յակոբ Պոյաճեան, 1891.- 183 զարդափակ էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՂՕԹՔ / ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ / ... / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ / 1891 /

Տասնվեցածայ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մեկ վերջագարդ, բուն շարադրանքում՝ Տերունական աղոթքը՝ նաև օսմաներեն, հայա-



տառ թուրքերեն, տաճկերեն, արաբերեն, հայատառ արաբերեն և անգլերեն տարբերակներով: Տիտղոսաթերթը՝ զարդափակ, վրան՝ զարդանախշ և օսմաներեն գրություն:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակն ունի մուգ շագանակագույն կոշտ, զարդապատ կազմ, որի վրա ոսկեգույն տառերով նշվել է վերնագիրը: Ա. Ղազիկյանը նկարագրել է միայն 1869 թ. տպագրությունն ու դրան կից հավելվածը: Սույն գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229391>


ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1895

ՀԻՆ կտակարանի պատմությունը.- Կոստանդնուպոլիս: Տպագրություն Ա. Յակոբ Պոյաճեան, 1895.- ԺԵ, 312 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ / ...
/ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ / Ա.
ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ / 1895 /



Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը և ենթավերնագրերը՝ հոծ երկաթագիր և նոտրգիր: Մանր զարդանախշեր, վերջազարդեր: Տիտղոսաթերթին՝ օսմաներեն


գրություն: 280-րդ էջից՝ «Բառարան»:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակն ունի մուգ շագանակագույն կոշտ, զարդապատ կազմ, որի վրա ոսկեգույն փառերով նշվել է վերնագիրը: «Հայ գիրքը 1851-1900 թթ.» մատենագիտության մեջ սույն նկարագրվել է աստղանիշով՝ ըստ մատենագիտական աղբյուրի:

Հայ գիրքը 1851-1900 թթ., թիվ 6914, Ղ 1, 1566

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229291>

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ թուաբանություն
մանկանց.- Կոստանդնուպոլիս: Տպագրություն Ա.
Յակոբ Պոյաճեան, 1895.- 105՝ էջ, նկ.

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ / ԹՈՒԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ /
ՄԱՆԿԱՆՅ / ... / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / ՏՊԱ-
ԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈԲ ՊՅՅԱԾԵԱՆ / 1895 /

Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական
թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև
նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Բուն
շարադրանքում՝ մանր պատկերներ: Շապիկը՝ զար-
դափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախ-

շեր: Տիտղոսաթերթին՝ նաև օսմաներեն գրություն:

Չանոթ.՝ «Հայ գիրքը 1851-1900 թթ.» մատենագիտության մեջ
գիրքը նկարագրվել է աստղանիշով՝ ըստ մատենագիտական աղբյուրի: Ա.
Ղազիկյանը էջերի քանակը նշել է 106:

Հայ գիրքը 1851-1900 թթ., թիվ 6870: Ղ 1, 792


<https://archives.saltresearch.org/handle/123456789/229281>

1898

ՔՐԻՍՏՈՍԻ կեանքը քաղում չորս աւե-
տարաններէն ժամանակագրական կարգաւ
/Պատրաստեց փրոֆ. Ս. Լեւոնեան.- Կոստանդ-
նուպոլիս: Տպագրություն Ա.Յ. Պոյաճեան, 1898.-
ԻԳ, 142 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵԱՆՔԸ / ՔԱՂՈՒԱԾ /
ՉՈՐՍ ԱՒԵՏԱՐԱՆՆԵՐԷՆ / ԺԱՄԱՆԱԿԱ-
ԳՐԱԿԱՆ ԿԱՐԳԱԻ / ՊԱՏՐԱՍՏԵՅ / ՓՐՈՖ. Ս.
ԼԵՒՈՆԵԱՆ / ... / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ /
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա.Յ. ՊՅՅԱԾԵԱՆ / 1898 /




ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մանր զարդանախշեր, բաժանազարդեր, մեկ վերջազարդ: Տիտղոսաթերթին՝ զարդանախշ և օսմաներեն գրություն:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակն ունի մուգ սև կոշտ, զարդափակ կազմ, որի վրա ոսկեգույն փառերով նշվել է վերնագիրը: Սույն տպագրության մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում: Գրքի մեկ այլ փարբերակ էլ գտնվել է Նյու Յորքի հանրային գրադարանում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229371>

1902



ԴՊՐՈՑԻ գիրքը: Ընտիր ընթերցումներ բացատրուած եւ ճոխ պատկերներով զարդարուած: Տարրական ընթացք. Երկրորդ տարի /Տէր եւ հրատարակիչ Զարեհ Թորոսեան.-Կ. Պոլիս: Տպարան «Ասըր», 1902.- Ե, 156 էջ, նկ.:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԴՊՐՈՑԻ ԳԻՐՔԸ / ԸՆՏԻՐ ԸՆԹԵՐ-ՑՈՒՄՆԵՐ / ԲԱՅԱՏՐՈՒԱԾ / ԵՒ / ՃՈՒՄ ՊԱՏ-ԿԵՐՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՈՒԱԾ / ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ-ՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ / ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ / ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ / Ուսումը չարիք ու վրանգ մըն է պողուն / Եթէ սրտի կրթութիւնը չընկերանար անոր: / Տէր ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ / ԶԱՐԵՀ ԹՈՐՈՍԵԱՆ / ՏՊԱՐԱՆ «ԱՍԸՐ» / Կ. ՊՈԼԻՍ / 1902 /

Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, օգտագործվել է նաև նոտրգիր: Վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մանր զարդանախշեր, բաժանարարներ, մանր պատկերներ: Շապիկը՝ նկարազարդ, վրան՝ տպագրության տարբերվող նշված է 1903, ինչպես նաև՝ «Բ. տարի», վերջերեսին՝ Զ. Թորոսեան գրատան հրատարակությունների ցանկը և գրքի արժեքի մասին տվյալ. «Գին 4 դահեկան»: Տիտղոսաթերթին՝ զարդա-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

նախշ, դարձերեսին՝ տպարանի ամբողջական տվյալը, հասցեն և օսմաներեն գրություն:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակը մի փոքր վնասված է, ունի խունացած շապիկ: «Հայ գիրքը 1901-1920 թթ.» մատենագիտության մեջ գիրքը նկարագրվել է աստղանիշով 1903 թ. ներքո՝ ըստ մատենագիտական աղբյուրի, իսկ հեղինակ նշվել է Ջարեհ Թորոսյանը: Գրքի մեկ այլ օրինակ էլ գտնվել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքության Օրմանեան մատենադարանում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229380>

1921

ՊՐԱՌԻՆ Զ. Ռ.


Քաջառողջության ամետարանը

/Գրեց Զ. Ռ. Պրանին; Հրատարակություն Ամերիկեան պրոտ ընկերության.- Կ. Պոլիս: Տպագրություն Յ. Մատթեոսեան, 1921.- Բ, 34 էջ.- (Վերաշինության մատենաշար, թիւ 7).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄՍՏԵՆԱՇԱՐ ԹԻԻ

7 / NO. 7 / THE GOSPEL OF HEALTH / ՔԱՋԱՌՈՂ-
ՋՈՒԹԵԱՆ / ԱԻԵՏԱՐԱՆԸ / ԳՐԵՅ / Զ. Ռ.
ՊՐԱՌԻՆ / Հրատարակություն Ամերիկեան Պորպ



Ընկերության / Կ. ՊՈԼԻՍ / ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄՍՏԹԷՆՈՍԵԱՆ / 1921 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մեկ զարդագիր, գլխազարդեր, մանր զարդանախշեր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ մատենաշարով հրատարակված և հրատարակության պատրաստ գրքերի ցանկ, ինչպես նաև՝ գրքի արժեքը. «Գին 25 դահեկան»:

Ծանոթ.՝ Սույն գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229298>

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1922

ՃԷՍԻԳԱ: Լոնտոնաբնակ աղջիկ մը:

Իրական պատմություն / Հրատարակություն
Ամերիկեան պորտ ընկերություն.-

Կոստանդնուպոլիս: Ա.հ., 1922. 43 էջ, նկ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՃԷՍԻԳԱ / ԼՈՆՏՈՆԱԲՆԱԿ ԱՂՋԻԿ ՄԸ
/ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒ
ԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ /
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1922 /



Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական
թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ

երկաթագիր: Բուն շարադրանքում՝ մանր զարդանախշեր և նկարներ:
Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր:

Ծանոթ.՝ Նկարագրված օրինակից բացակայում է շապիկի
վերջերեսը: Գիրքը տպագրվել է նաև 1934 թվականին Կ. Պոլսի Սէլամէթ
տպարանում: Գրքի նկարագրությունը բացակայում է «Հայ գիրքը 1921-1930
թթ.» մատենագիրությունից:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229388>


ՊՈՆՏՈՒՆ ԾՈՂԷՖԻՆ=

BALDWIN JOSEPHINE

Հին ժամանակի պատմություններ: Կրտսե-
րագոյն կարգ. Ա. տարի, մասն Ա. /Գրեց Ճոզէֆին
Պոլտովին; Հրատարակություն Ամերիկեան Պորտ ըն-
կերություն.- Կ. Պոլիս: Տպագրություն Յ. Մատթէո-
սեան, 1922.- 119 էջ.- (Ուսուցչի դասագիրք):

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԸՆԹԱՅՔ, ՄԱՍՆ Ա. /
STORIES FROM THE OLDEN TIME / ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ
/ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ՈՒՍՈՒՅՅԻ ԴԱՍԱԳԻՐՔ /



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ


ԳՐԵՅ / ՃՈՂԷՖԻՆ ՊՈՒՆՏՈՒՆ / Հրատարակություն Ամերիկեան Պորտ ընկերութեան / Կ. ՊՈՒԼԻՍ / ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՆՍԵԱՆ / 1922 /

Տասնվեցածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Բուն շարադրանքում՝ տողատակի ծանոթագրություններ: Շապիկը՝ զարդափակ, շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրություն՝ գրքի հետագա հրատարակությունների մասին, ինչպես նաև՝ տպարանի տվյալը: Առաջաբանը՝ «Ամերիկացի հրատարակչի»:

Բովանդ.՝ Ա. մաս. Սկսնակներու պատմութիւններ; Բ. մաս. Երեք նահապետներու պատմութիւններ; Յաւելուած:

Ծանոթ.՝ Նկարագրությունը կատարվել է նաև շապիկից: Կրտսերագոյն կարգի համար նախատեսված կիրակնօրյա դասերի սույն դասագիրքը բաղկացած է Ա, Բ, Գ և Դ փորհներից, որոնք էլ իրենց հերթին ունեն իրենց Ա-Դ մասերը: «Ուսուցչի դասագիրք» և «Աշակերտներու գործի եւ ուսման գիրք» մատենաշարերով հրատարակվել են 1922-1927 թվականներին: Հայ գրքի մատենագիտության մեջ նկարագրվել է միայն Ա. փարի Գ. մասը: Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229265>



ՊՈՒՆՏՈՒՆ ԾՈՂԷՖԻՆ= BALDWIN JOSEPHINE

Հին ժամանակի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Ա. տարի. մասն Բ. /Հրատարակություն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէնսեան, 1922.- 115 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՅԻ ԴԱՍԱԳԻՐՔ / STORIES FROM THE OLDEN TIME / JOSEPHINE BALDWIN / ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ / ՊԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ /

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ


ԿՐՏԱԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Ա. ՏԱՐԻ. ՄԱՍՆ Բ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1922 /

Տասնվեցամյալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրություն՝ գրքի հետագա հրատարակությունների մասին:

Քովանդ.՝ Բ. Երեք նահապետներու պատմություններ; Գ. Յովսեփայ պատմություններ; Յանելուած:

Ծանոթ.՝ Տպարանի տրյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ: Տե՛ս նաև նախորդ գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229266>



ՊՈՆՏՈՒՆ ԾՈՂԷՅԻՆ=

BALDWIN JOSEPHINE

Հին ժամանակի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Ա. տարի, մասն Դ. /Հրատարակություն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէսեան, 1922.- 116, 1 չի. էջ, նկ.- (Ուսուցչի դասագիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / STORIES FROM THE OLDEN TIME / JOSEPHINE BALDWIN /

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Ա ՏԱՐԻ. ՄԱՍՆ Դ. / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1922 /

Տասնվեցամյալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրու-


ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

թյուն՝ գրքի հետագա հրատարակությունների մասին, ինչպես նաև՝ տպարանի տվյալը:

Ծանոթ.՝ Ե. Պապունյանի գրքի Յիսուս ըրա; 2. Վերակրկնուած պապունյանի գրքեր; Յաւելուած:

Ծանոթ.՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ: Տե՛ս նաև Ա. Կարի Ա. մասի գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229268>



ՊՈՒՍՏՈՒՆ ԾՈՂԷՏԻՆ=

BALDWIN JOSEPHINE

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Բ. տարի. Մասն Ա. /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1922.- 163 էջ.- (Ուսուցչի դասագիրք):

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՅԻ ԴԱՍԱԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Բ ՏԱՐԻ. ՄԱՍՆ Ա / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ

ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1922 /

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Մանր զարդանախշեր, տողատակի ծանոթագրություններ: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրություն՝ գրքի հետագա մասերի հրատարակությունների մասին, ինչպես նաև՝ տպարանի տվյալը:

Ծանոթ.՝ Ա. Ամէնօրեայ հերոսներու պապունյանի գրքեր; Բ. Պապունյանի գրքերու հերոսին վրայ; Յաւելուած:

Ծանոթ.՝ Հեղինակի անվան տվյալը վերցվել է հրատարակչի առաջաբանից: «Հերոսի պատմություններ» Բ. տարվա Ա. մասը տպագրվել է

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1922 թ., իսկ Բ, Գ, Դ մասերը՝ 1923-ին: «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ նկարագրվել է միայն Բ. տարվա Գ. մասը: Ա, Բ և Դ մասերի մատենագիտական նկարագրությունները բացակայում են:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229257>

1923

ՊՈՒՆՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ=

BALDWIN JOSEPHINE

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր տասը տարեկան տղայոց): Բ տարի-Մասն Ա. /Հրատարակություն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Յ.Մ. Սէթեան, 1923.- 48 երկայուն էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք)։

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ ԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE

BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (ԻԲՐ ՏԱՍԸ ՏԱՐԵԿԱՆ ՏՂԱՅՈՅ) / Բ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Ա / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /

Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ չորս ներդիր թերթ նկար:

Ծանոթ.՝ Շապիկին տպագրության թվականը նշվել է 1924: Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Տիտղոսաթերթի դարձերեսին՝ «Նամակ հեղինակէն»: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229261>



ՊՈՒՏՈՒՆ ԾՈՂԷՖԻՆ=

BALDWIN JOSEPHINE

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Բ. տարի. Մասն Բ. /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1923.- 104 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Բ ՏԱՐԻ. ՄԱՍՆ Բ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /

Ութաձայլ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրություն:


Բովանդ.՝ Բ. Պատմություններ հերոսներու հերոսին վրայ:

Ծանոթ.՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից: Տե՛ս Բ. տարի մասն Ա. գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229258>

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՊՈՆՏՈՒՆ ԾՈՋԷՖԻՆ=



BALDWIN JOSEPHINE

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ. Բ տարի-Մասն Դ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1923.- 115 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՉԻ ԴԱՍԱԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱՆԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / Բ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Դ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ /

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /


Ութաձայ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Տիտղոսաթերթի դարձերեսին՝ անգլերեն նշում. «Printed in Constantinople»: Շապիկի վերջերեսին՝ ծանոթագրություն:

Բովանդ.՝ Գ. Պապմութիւններ Յիսուսի հերոս հերոսողներու վրայ; Դ. Հին կրակարանի հերոսներու պապմութիւններ; Յաւելուած:

Ծանոթ.՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից: Տե՛ս նաև Բ. տարի մասն Ա. գրառման ծանոթագրությունը:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229260>

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ՊՈՒՍՏՈՒՆ ԾՈՂԷՖԻՆ=

BALDWIN JOSEPHINE

Հին ժամանակի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (իբր ինը տարեկան տղայոց): Ա. տարի-մասն Բ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1923.- 40 երկյուն էջ, նկ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք)։

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ ԳԻՐՔ / *STORIES FROM THE OLDEN TIME* / JOSEPHINE BALDWIN / ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ / ՊԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (ԻԲՐ ԻՆԸ ՏԱՐԵԿԱՆ ՏՂԱՅՈՅ) / Ա ՏԱՐԻ-ՄԱՍՆ Բ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքի վերջում՝ ութ թերթ նկար:

Ծանոթ.՝ Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում: Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության մեջ ներառվել է միայն Ա տարվա Ա մասը:

«Մատենագիտություն յիսնամեայ շրջանի (1923-1972) սրանպուլահայ գրքի», Շողակաթ, Իսթանպուլ, 1977, թ. 9 գրառում

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229270>



ՊՈՒՍՏՈՒՆ ԾՈՂԵՖԻՆ=
BALDWIN JOSEPHINE

Հին ժամանակի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր ինը տարեկան տղայոց): Ա. տարի-մասն Գ /Հրատարակություն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1923.- 38 էջ, նկ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք):

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ ԳԻՐՔ / STORIES FROM THE OLDEN TIME / JOSEPHINE BALDWIN / ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ / ՊԵՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (ԻԲՐ ԻՆԸ ՏԱՐԵԿԱՆ ՏՂԱՅՈՅ) / Ա ՏԱՐԻ-ՄԱՍՆ Գ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /


Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ հասվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքի վերջում՝ ութ թերթ նկար: Բնագրում՝ նաև երկայուն էջեր:

Ծանոթ.՝ *Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում:*

«Մատենագիտություն յինամեայ շրջանի (1923-1972) սրանպուլահայ գրքի», Շողակաթ, Իսթանպուլ, 1977, թ. 10 գրառում

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229271>

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ՊՈՒՆՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ=

BALDWIN JOSEPHINE

Հին ժամանակի պատմություններ:
Կրտսերագոյն կարգ (Իբր ինը տարեկան տղայոց):
Ա. տարի-մասն Դ / Հրատարակութիւն Ամերիկեան
Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպա-
գրութիւն Յ. Մատթէոսեան, 1923.- 40 էջ, նկ.-
(Աշակերտներու գործի եւ ուսման գիրք):

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ
ԳԻՐՔ / STORIES FROM THE OLDEN TIME / JOSEPHINE BALDWIN / ՀԻՆ
ԺԱՄԱՆԱԿԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (ԻԲՐ ԻՆԸ
ՏԱՐԵԿԱՆ ՏՂԱՅՈՑ) / Ա ՏԱՐԻ-ՄԱՍՆ Դ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵ-
ՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1923 /

Մամուլանիշեր չունի: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր:
Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին
և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքի վերջում՝ ութ թերթ նկար: Բնա-
գրում՝ նաև երկայուն էջեր:

Ծանոթ.՝ *Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գրքի
մաքենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ գրքի համահավաք
մաքենագիտական ցանկերում:*

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229272>


1924

ՊՈՒՍՏՈՒԻՆ ՃՈՂԷՖԻՆ=
BALDWIN JOSEPHINE

Թագաւորութեան պատմութիւններ:
Կրտսերագոյն կարգ. Գ տարի-Մասն Ա /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագրութիւն Յ. Մ. Սէթեան, 1924.- 152 էջ.- (Ուսուցչի դասագիրք).

ՏԻՏՆՈՍԱԹԵՐԹ

ՈՒՍՈՒՅՅԻ ԴԱՍԱԳԻՐՔ / KINGDOM
STORIES / JOSEPHINE BALDWIN / ԹԱԳԱՒՈՐՈՒ
ԹԵԱՆ / ՊՈՒՍՏՈՒԹԻՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ




ԿԱՐԳ / Գ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Ա / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՍԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1924 /

Ութածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, վրան և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր, դարձերեսին՝ նշում. «Printed in Constantinople»: Շապիկի վերջերեսին՝ «Ուսուցչի դասագիրք» մատենաշարով լոյս տեսած Ա, Բ և Գ տարիների գրքերի ծանոթագրությունները:

Բովանդ.՝ Ա. Պատմութիւններ Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններուն վրայ; Յաւելուած:

Ծանոթ.՝ Տպարանի տվյալը վերցվել է շապիկի վերջերեսից: Գ տարվա Բ, Գ, Դ մասերը տպագրվել են 1925 թ.: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229273>



ՊՈՆՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ=
BALDWIN JOSEPHINE

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր տասը տարեկան տղայոց): Բ տարի-Մասն Բ. /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Յ. Մ. Սէթեան, 1924.- 48 երկայուն էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).


ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ ԳԻՐԲ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱԵՐԱԳՅՆ ԿԱՐԳ / (Իբր փասը փարեկան տղայոց) / Բ. ՏԱՐԻ-ՄԱՍՆ Բ. / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1924 /

Ութածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ հինգ ներդիր թերթ նկար, քարտեզ:

Ծանոթ.՝ *Տպարանի տվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից: Գրքի Բ տարի մասն Ա-ն տպագրվել է 1923 թվականին: Տե՛ս նաև Բ տարի Ա մասի ծանոթագրությունը:*

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229262>



**ՊՈՒՆՏՈՒՆ ՃՈՋԷՖԻՆ =
BALDWIN JOSEPHINE**

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (իբր տասը տարեկան տղայոց): Բ տարի-Մասն Գ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Յ. Մ. Սէթեան, 1924.- 48 երկայուն էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք):

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ


ԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN / ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (Իբր փասը փարեկան փղայոց) / Բ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Գ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1924 /

Ութածալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Տիտղոսաթերթի դարձերեսին՝ հեղինակի նամակը: Գրքում՝ չորս ներդիր թերթ նկար, քարտեզ:

Ծանոթ.՝ Տպարանի փվյալը վերցվել է շապիկի դարձերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229263>

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ՊՈՒՏՈՒՆ ՃՈՂԵՑԻՆ= BALDWIN JOSEPHINE

Հերոսի պատմություններ: Կրտսերագոյն կարգ (Իբր տասը տարեկան տղայոց): Բ տարի-Մասն Դ /Հրատարակութիւն Ամերիկեան Պորտ ընկերութեան.- Կոստանդնուպոլիս: Տպագր. Յ. Մ. Սէթեան, 1924.- 48 երկայուն էջ.- (Աշակերտներու գործի եւ ուսման գիրք).

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԻ ԵՒ ՈՒՍՄԱՆ
ԳԻՐՔ / HERO STORIES / JOSEPHINE BALDWIN /
ՀԵՐՈՍԻ / ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ / ԿՐՏԱՐԱԳՈՅՆ ԿԱՐԳ / (Իբր փասը
փարեկան տղայոց) / Բ ՏԱՐԻ-ՄԱՍՆ Դ / ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ / ԱՄԵՐԻ-
ԿԵԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ / 1924 /

Ութաձայ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բոլորգիր, վերնագրերը՝ հոծ երկաթագիր: Շապիկը՝ զարդափակ, դարձերեսին՝ զարդափակ շրջանակում՝ հատվածներ Սուրբ Գրքից: Շապիկին և տիտղոսաթերթին՝ զարդանախշեր: Գրքում՝ վեց ներդիր թերթ նկար, քարտեզ:

Շանոթ.՝ Տպարանի փոխառ վերցվել է շապիկի դարձերեսից: Գրքի մատենագիտական նկարագրությունը բացակայում է հայ գրքի մատենագիտությունից:

<https://archives.saltresearch.org/handle/123456789/229264>

Շարունակելի...